ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից գործառույթների շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կազմակերպվել է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի հավաքագրման, պատրաստման աշխատանքները:

Կազմակերպվել և իրականացվել է տնտեսական վիճակի վերլուծություն, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքներ: Ապահովել է տնտեսական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների, ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև ակտիվ համագործակցություն:

Տարբեր ոլորտներով և ձևաչափերով կազմվել են ընթացիկ հաշվետվություններ, և իրականացվել է վերլուծական-համադրական աշխատանք:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովվվել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը, որն էլ նպաստել է զբոսաշրջիկների թվի աճին: Չնայած զբոսաշրջիկների թիվը 2023 թվականի համեմատությամբ չի աճել,որը պայմանավորված է ՌԴ –ի զբոսաշրջիկների թվի կրճատմամբ, սակայն էականորեն ավելացել է եվրոպացի զբոսաշրջիկների թիվը:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով բաժինը մասնակցել է տարաբնույթ ներդրումային ծրագրերի կազմման և մշակման աշխատանքներին:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում մշակվել է զբոսաշրջային 10 կլաստեր, որոնց մշակման և հիմնավորման աշխատանքներին ակտիվ մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը, մասնավորապես զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժինը, որի արդյունքում վերոնշյալ 10 կլաստերից 3-ն իրականացվում է մարզում:

Ստորև ներկայացնում ենք նշված կլաստերները.

1. «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման» ծրագրի «Ինստիտուցիոնալ զարգացում» բաղադրիչի շրջանակներում «Արենի հանգույցի վերականգնում» ենթածրագրի (միջազգային կազմակերպության կողմից կատարվել է ծրագրի արդյունավետության գնահատումը, որն ավարտվել է 2024 թ.-ի փետրվարին: Դրան հաջորդել է իրականացման փուլը: (Նախատեսվում է մոտավորապես 3 մլն ԱՄՆ դոլլարին համարժեք ներդրումներ),
2. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման» ծրագրի «Ինստիտուցիոնալ զարգացում» բաղադրիչի շրջանակներում հիմնանորոգվել և կառուցվել են Ջերմուկ քաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,5 մլրդ ՀՀ դրամ, որից 2024 թվականին իրականացվել են 1,9 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ:
3. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի «Եղեգիսի զբոսաշրջային կլաստեր»:

Ծրագրի մշակման և արդյունավետության գնահատման աշխատանքներն սկսվել են սեպտեմբերից և կավարտվեն 2025 թվականի մարտ ամսին, որին կհաջորդի իրականացման փուլը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են կարիքների վերհանման և վերլուծական աշխատանքներ: Հոկտեմբեր ամսին մարզպետի աշխատակազմում շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկվել է ծրագրի

նախնական տարբերակը: Ներկայացված առաջարկների համատեքստում Զբոսաշրջության կոմիտեի և Սիվվիտա Արմենիա ընկերության հետ համատեղ մշակվել է «Եղեգիս զբոսաշրջության կլաստերի հայեցակարգը», որը կներկայացվի դեկտեմբեր ամսին՝ մարզպետի աշխատակազմում: Ծրագրի ընդհանուր արժեքը նախնական հաշվարկներով կազմում է 5 մլրդ ՀՀ դրամ:

Աշխատանքներ են կատարվել մարզի մոտ 1400 պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության, առողջարանների և հանգստյան գոտիների ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրանց կարողությունները պատշաճ ներկայացնելու ուղղությամբ՝ դրանով իսկ մարզը դարձնելով զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա 4 եղանակների համար: Պարբերաբար իրականացված մշտադիտարկումների ընթացքում լուսանկարվել են պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանները և վերհանվել են առկա հիմնախնդիրները՝ հետագայում լուծելու նպատակով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի հետ համատեղ քննարկվել են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը:

Ակտիվորեն մասնակցել է ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ներքին զբոսաշրջության խթանման նպատակով կազմակերպված «Ճանաչիր Հայաստանը» խորագրով ցուցահանդեսի իրականացման աշխատանքներին՝ լավագույնս ներկայացնելով մարզի զբոսաշրջային ներուժը:

Հավաքագրվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե է ներկայացվել ՀՀ Վայոց ձորի մարզի հիմնական այցելվող տեղեկատվական վահանակների տեղադրման կարիք ունեցող պատմամշակութային վայրերի ցանկը:

Մասնակցել է Վայոց Ձորի զբոսաշրջային քարտեզի ռեսուրսների հավաքագրման աշխատանքներին:

Հավաքագրվել և վերլուծվել է մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե:

Մասնակցել է զբոսաշրջության կոմիտեի տարեկան հաշվետվության ամփոփման աշխատանքներին:

Արտաքին կապեր

Արտաքին կապերի զարգացման արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ պարբերաբար իրականացվել են աշխատանքները:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը:

Մասնակցել է Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքներին և ավարտական միջոցառման կազմակերպմանը:

Պարբերաբար մշակվել և ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել 2022թ. հունիսի 29-30-ը Լիոնում կայացած հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն:

2024թ.-ի սպտեմբերի 11-26-ն ընկած ժամանակահատվածում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ֆուժիան նահանգի Ֆուզոու քաղաքում բաժնի աշխատակիցը մասնակցել է Չինաստանի կառավարության կողմից կազմակերպված «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ ռեգիոնալ տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին:Դասընթացի նպատակի հիմքում հայ-չինական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումն էր:

Վայոց ձորի մարզը մշտապես կարևորում է սփյուռքահայերի, սփյուռքի կառույցների և հատկապես գործընկեր մարզերում հայկական համայնքների հետ աշխատանքի դերը ինչպես Հայաստան-Սփյուռք գործակցության, այնպես միջտարածաշրջանային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում, որի արդյունքում ամուր կապեր են հաստատվել արտասահմանում գտնվող հայ

համայնքների և կառույցների հետ: Մասնակցել է նաև մարզի բոլոր համայնքների երիտասարդների հավաքագրման աշխատանքներին:

Մասնակցել է 2024թ. սեպտեմբերի սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից կազմակերպված Համաշխարհային հայկական գագաթնաժողովի շրջանակներում իրականացված ցուցահանդեսի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին

ՀՀ Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արձանագրության կետերի վերաբերյալ հանձնարարականները ներկայացրել է մարզի համայնքներին և ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ՏԿԵՆ:

Հավաքագրվել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների վաճառքի արգելքն իրականացնելու ուղղությամբ ՏԻՄ-երի կողմից տարվող վերահսկողության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Սուբվենցիոն ծրագրեր

2024 թվական տեղափոխված ծրագրերն՝ ըստ համայնքների

2023 թվականից 2024 թվական տեղափոխվել է 1 ծրագիր՝

Ջերմուկ համայնք՝ 1

1. **Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի և խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում՝ 64,840,848 ՀՀ դրամ արժողությամբ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է՝ 19452254 ՀՀ դրամ,կամ 30%, իսկ պետության մասնաբաժինը՝ 45038594 ՀՀ դրամ կամ կամ 70 %:** Աշխատանքներն ավարտված են: Ընթանում են սուբվենցիայի տրամադրման աշխատանքներ:

2024 թվականից 2025թ. տեղափոխված ծրագրերն ըստ համայնքների

2024 թվականից 2025 է տեղափոխվել 8 ծրագիր, որից 1-ը 2022ից տեղափոխված ծրագիր է:

Արենի համայնք՝ (2022 թ.-ից տեղափոխված)

1. Արենի համայնքի Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **343 425 950** ՀՀ դրամ է, **որից** Ծրագի ընդհանուր արժեքը՝ 334 մլն 340 հազ ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ **66, մլն 868 հազ ՀՀ դրամ կամ 20%: Պետության մասնաբաժինը կազմում է 267, մլն 472 հազ ՀՀ դրամ կամ 80% (կվճարվի 81 մլն 700 հազ ՀՀ դրամ)**:Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 65%-ով:

2024թ.ից տեղափոխված ծրագրեր.

Ջերմուկ համայնք՝ 1 ծրագիր

1. Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում, Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում, Գնդեվազ գյուղի գերեզմանատուն տանող աստիճանների կառուցում: Մրցույթ չի հայտարարվել:

Եղեգիս համայնք՝ 2 ծրագիր

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հորբատեղ,Հորս Արտաբույնք, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **81 մլն 420 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ **24 մլն 426 հազ ՀՀ դրամ կամ 30%: Պետության մասնաբաժինը կազմում է 56 մլն 994 հազ ՀՀ դրամ կամ 70%:** Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 30%-ով:
3. Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ և Հերմոն բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում և Աղնջաձոր բնակավայրերի ՕԿՋ-ի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **46 մլն 100 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ **13 մլն 830 հազ ՀՀ դրամ կամ 30%: Պետության մասնաբաժինը կազմում է 32 մլն 270 հազ ՀՀ դրամ կամ 70%:**Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 30%-ով:
4. Արենի համայնքի 1. Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում, 2. Խաչիկ բնակավայրում «40 աղբյուրներ» ջրաղբյուրի խմելու ջրատարի 3.0կմ ջրագծի, 3. Չիվա բնակավայրում

«Բարսեղի աղբյուր» ջրաղբյուրի ջրագծի, 4. Չիվա բնակավայրում կոյուղու մաքրման կայանի կառուցում:

1-ին ենթածրագրի ընդհանուր արժեքը՝ **5 մլն 65 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ **1 մլն 266,2 հազ ՀՀ դրամ կամ 25%: Պետության մասնաբաժինը կազմում է 3 մլն 798,7 հազ ՀՀ դրամ կամ 75%:** Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 75%-ով:

2-րդ ենթածրագրի ընդհանուր արժեքը՝ **58 մլն 550 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ **14 մլն 637,5 հազ ՀՀ դրամ կամ 25%: Պետության մասնաբաժինը կազմում է 40 մլն 350 հազ ՀՀ դրամ կամ 75%:** Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 75%-ով:

5. **Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող 16-րդ և 17-րդ փողոցների կառուցում սալիկապատմամբ:** Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **157 մլն 29,3 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ 39 **մլն 257,3 հազ ՀՀ դրամ կամ 25%: Պետության մասնաբաժինը կազմում է 117 մլն 772 հազ ՀՀ դրամ կամ 75%:**Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 75%-ով:

Վայք համայնք՝ 1 ծրագիր

6. Սերս, Բարձրունի, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ բնակավայրերի գյուղամիջյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **165 մլն 557,3 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ 74 **մլն 501 հազ ՀՀ դրամ կամ 45%: Պետության մասնաբաժինը կազմում է 91 մլն 56 հազ ՀՀ դրամ կամ 55%:**Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 5%-ով:

Եղեգնաձոր համայնք՝ 1 ծրագիր

7. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Զորավար փողոցի բարեկարգում և ասֆալտապատում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **98 մլն 40,3 հազ** ՀՀ դրամ է: Համայնքի մասնաբաժինը՝ 53 **մլն 922,1 հազ ՀՀ դրամ կամ 55%: Պետության մասնաբաժինը կազմում է 44 մլն 118,1 հազ ՀՀ դրամ կամ 45%:** Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 30%-ով:

2024 թվականի համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված **15** սուբվենցիայի ծրագրի ամբողջական փաթեթներ:

Ստորև ներկայացվում է ծրագրերի ցանկը՝ ըստ համայնքների՝

1. **Եղեգնաձոր համայնք- 3 ծրագիր՝**
   - «Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում»
   - «Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում»
   - Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Զորավար և Շահումյան փողոցների բարեկարգում և ասֆալտապատում»
2. **Ջերմուկ համայնք՝ 2 ծրագիր**
   - Ջերմուկ համայնքի «Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում, Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում, Գնդեվազ գյուղի գերեզմանատում տանող աստիճանների կառուցում»
   - «Գնդեվազ գյուղի ոռոգման ցանցի ընդլայնում»

3. **Վայք համայնք՝ 2 ծրագիր**
   - «Վայք համայնքի Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ»
   - «Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ»
4. **Արենի համայնք՝ 5 ծրագիր**
   - «Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում»

- «Ագարակաձոր բնակավայրում 500գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցում, Խաչիկ բնակավայրում 2,5 կմ արտաքին ցանցի կառուցում, Ռինդ բնակավայրում ՝ «Ավշար» հանդամասում 300 գծմ, «Իշխանասար» հանդամասում 200գծմ արտաքին ցանցի կառուցման աշխատանքներ»
- «Գնիշիկ բնակավայրում «Խազազի ձոր-Կարմիր քար» հանդամասում 1 կապտաժի և ջրագծի 1կմ հատվածի հիմնանորոգում, Խաչիկ բնակավայրում «40 աղբյուր» ջրաղբյուրի 3 կմ ջրագծի կառուցում, Չիվա բնակավայրում «Բարսեղի աղբյուր» ջրաղբյուրի ջրագծի հիմնանորոգում, Չիվա բնակավայրում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքներ»
- «Ագարակաձոր բնակավայրում չլուսավորված 26 փողոցների լուսավորության համակարգերի կառուցում, Ելփին բնակավայրի 24 փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում, Չիվա բնակավայրում 22 փողոցների լուսավորման համակարգերի կառուցում»
- «Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող ճանապարհի կառուցում՝ սալարկմամբ»

5. **Եղեգիս համայնք՝ 3 ծրագիր**
    - «Եղեգիս համայնքի Թառաթումբ, Շատին, Արտաբույնք և Աղնջաձոր բնակավայրերում փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ»
    - «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հերմոն և Աղնջաձոր բնակավայրերում խմելու ջրագծի, ՕԿՋ-ի կառուցման աշխատանքներ»
    - «Շատին, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգման աշխատանքներ»

2025 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի հայտեր

2025 թ. համար մարզի համայնքների կողմից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել **26 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 5 ծրագիր, **Ջերմուկ՝** 2 ծրագիր, **Վայք՝** 8 ծրագիր, **Արենի՝** 7 ծրագիր, **Եղեգիս՝** 4 ծրագիր):

2024 թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի 12 ամբողջական փաթեթ՝ 1 **մլրդ** 438 մլն **ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 787,1 մլն ՀՀ դրամը կամ 45,26 %-ը համայնքների ներդրումն է, 650.8 մլն ՀՀ դրամը կամ 54,74%-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

Ստորև ներկայացվում է ծրագրերի ցանկը՝ ըստ համայնքների՝

Եղեգնաձոր համայնք- 5 ծրագիր՝

1. «Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում»
2. «Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում»
3. «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատատում»
4. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզների բակերի բարեկարգում»
5. «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ոռոգման ցանցի վերակառուցում»

Վայք համայնք ՝ 3 ծրագիր

1. «Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի ջրագծերի, գլխամասային կառույցների, արտաքին և ներքին ջրագծերի հիմնանորոգում
2. «Վայք համայնքի Գոմք բնակավայրի 4-րդ և 5-րդ փողոցների, Զառիթափ բնակավայրի 3-րդ, 8-րդ, 12-րդ փողոցների, Եռաբլուրի անցուղու, 3-րդ փողոցի

1-ին նրբանցքի, Արտավան բնակավայրի 1-ին փողոցի Սարավան բնակավայրի 3-րդ, 5-րդ և 7-րդ փողոցների, Ազատեկ բնակավայրի 2-րդ փողոցի, Արին բնակավայրի 1-ին և 6-րդ փողոցների, Փոռ բնակավայրի 2-րդ, 3-րդ և 6-րդ փողոցների, Զեդեա բնակավայրի 3-րդ փողոցի, Հերհեր բնակավայրի 18-րդ փողոցի, Իսրայել Օրի փողոցի 165գծմ և Իսրայել Օրի 1-ին նրբանցքի 52գծմ հիմնանորոգում»

3. «Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 3-րդ փողոցի հիմնանորոգում

Եղեգիս համայնք՝ 2 ծրագիր

1. Եղեգիս համայնքի Քարագլուխ, Արտաբույնք, Գողթանիկ, Սալլի, Աղնջաձոր, Հորբատեղ, Հորս և Թառաթումբ բնակավայրերի ոռոգման առուների կառուցում
2. «Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի խմելու ջրագծի կառուցում»

Արենի համայնք՝ 2 ծրագիր

1. Արենի համայնքի համար աղբատար մեքենայի ձեռքբերում
2. Արենի համայնքի համար էքսկավատոր մեքենայի ձեռքբերում

2024 թվականին ֆինանսավորման է ներկայացվել **19 սուբվենցիոն ծրագիր (ենթածրագիր)**՝ 2022,2023 թվականի սուբվենցիոն ծրագրեր, որոնցից 14-ը ֆինանսավորվել է:

ՀՀ Վայոց ձորի մարզին 2024 թվականին ՀՀ կառավարության 5 որոշման համաձայն՝ հաստատված սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար տրամադրվել է **473 մլն 467,3 ՀՀ դրամի սուբվենցիա:**

Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Ա. Կոստանյան